# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» օգոստոսի 2023 թվականի N **625**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26.06.2023Թ. ԹԻՎ440 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 26.06.2023թ. թիվ 440 որոշումը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 –րդ կետով որոշում եմ՝

1. Ստեփանավան համայնքի ղեկավարի 26.06.2023թ. թիվ 440 որոշման 2-րդ կետը փոխարինել հետևյալ բովանդակությամբ.

Սույն որոշման 1-ին կետում նշված 590,9 քմ մակերեսով հողամասից 400.0 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Առաքել Մելիքի Անախասյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 190.9 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Առաքել Մելիքի Անախասյանին և մինչև 2001թ. կառուցված նկուղի, բնակելի տան, տնտեսական շենքի և պարիսպների նկատմամբ ճանաչել նրա սեփականության իրավունքը: Առաքել Մելիքի Անախասյանի սեփականության իրավունքը հաստատվում է նաև կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի անշարժ գույքի միավորների տեղեկագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» օգոստոսի 2023 թվականի N **626**

### ՔԱՂԱՔԱՑԻ ԶԵՆՖԻՐԱ ՍԵԴՐԱԿԻ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՏԱԲԵՐԴ ԹԱՂԱՄԱՍ 23 ՇԵՆՔԻ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 27.02.2018թ. թիվ 19-Ն որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնք Ստեփանավան ք. Աշոտաբերդ թաղամաս 23 շենքի թիվ 7 բնակարան հասցեի մեկ սենյականոց բնակարանը ընդհանուր 39.55 քմ մակերեսով, որից բնակելին՝ 20.37 քմ, վաճառել Զենֆիրա Ջանջուղազյանի երկու անձից բաղկացած ընտանիքին.

   1. Զենֆիրա Սեդրակի Ջանջուղազյան – ինքը, ծնված 1944թ.
   2. Արտյոմ Օնիկի Թորոսյան -որդին, ծնված 1978թ.

2. Պարտավորեցնել Զենֆիրա Ջանջուղազյանին համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով համայնքային բյուջե մուծել բնակելի տարածության մակերեսի արժեքը 5093 /հինգ հազար ինիսուներեք/ ՀՀ դրամի չափով:

3. Քաղաքացի Զենֆիրա Ջանջուղազյանին՝ սեփականաշնորհման գործընթացը վավերացնել նոտարական կարգով, իսկ սեփականության իրավունքը ամրագրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **ՀՐԱՀԱՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» օգոստոսի 2023 թվականի N **627**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՎԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՍԻՆԻ ՓՈՂՈՑ 69 ՇԵՆՔԻ 20 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 27.02.2018թ. թիվ 19-Ն որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնք Ստեփանավան ք. Դեսինի փողոց 69 շենքի թիվ 20 բնակարան հասցեի երեք սենյականոց բնակարանը ընդհանուր 108.75 քմ մակերեսով, որից բնակելին՝ 66.59 քմ, վաճառել Արևիկ Սահակյանի հինգ անձից բաղկացած ընտանիքին.

1. Արևիկ Գևորգի Սահակյան-ինքը, ծնված 1950թ.
2. Լուսինե Այվազյան Մառլենի-դուստրը, ծնված 1973թ.
3. Աստղիկ Այվազյան Մառլենի-դուստրը, ծնված 1977թ.
4.Սամսոն Այվազյան Մառլենի-որդին, ծնված 1980թ.
2. Մերի Այվազյան Վարդանի-թոռը, ծնված 1997թ.

3. Պարտավորեցնել Արևիկ Գևորգի Սահակյանին համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով համայնքային բյուջե մուծել բնակելի տարածության մակերեսի արժեքը 33295 /երեսուներեք հազար երկու հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամի չափով:

4. Քաղաքացի Արևիկ Սահակյանին՝ սեփականաշնորհման գործընթացը վավերացնել նոտարական կարգով, իսկ սեփականության իրավունքը ամրագրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» օգոստոսի 2023 թվականի N **628**

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արամ Կիրակոսյանի 2023 թվականի օգոստոսի 18-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 27.12.2022թ. թիվ 130-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Գ. Նժդեհի փողոց թիվ 16 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Արամ Կիրակոսյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա երրորդ եռամսյակի համար՝ 01.07.2023-30.09.2023թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար ժ/պ Լ. Քալանթարյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման, առևտրի սպասարկման և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» օգոստոսի 2023 թվականի N **629**

## ՀԱՍՄԻԿ ԳՐԻՇԱՅԻ ԻՍՊԻՐՅԱՆԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹՎԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԻ՝ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Դեսինի փողոց թիվ 32/10 հասցեի բնակիչ Սեդա Հակոբյանի 15.08.2023թ.-ի թիվ Հ-779 դիմումը՝ առանց ծնողական խնամքի մնացած՝ Հասմիկ Գրիշայի Իսպիրյանին՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձի, սկզբնական հաշվառման վերցնելու մասին, Ստեփանավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2023 թվականի օգոստոսի 18-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 11, կետ 9), նաև հաշվի առնելով, որ Հասմիկ Գրիշայի Իսպիրյանին՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխայի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում 2021 թվականի փետրվարի 04-ին վերցրված է կենտրոնացված հաշվառման (կենտրոնացված հաշվառման համարն է՝ 10), Հասմիկ Իսպիրյանի հայրը՝ Գրիշա Վահագի Իսպիրյանը, մահացել է 25.03.2007թ.-ին մայրը՝ Տաթևիկ Կոլյայի Հակոբյանը, մահացել է 11.10.2006թ.-ին և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 962-Ն որոշմամբ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի ապրիլի 12-ի թիվ 62-Ն հրամանով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքի Դեսինի փողոցի թիվ 32/10 հասցեի բնակիչ՝ Հասմիկ Գրիշայի Իսպիրյանին (ծնված՝ 02.11.2003թ., անձնագիր՝ AU0483738, տրված՝ 04.11.2021թ., 053-ի կողմից)՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձի, վերցնել սկզբնական հաշվառման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** ՀՐԱՀԱՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» օգոստոսի 2023 թվականի N **630**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 13 ՀԱՍՑԵԻ, 06-007-0056-0036 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Իսահակյան փողոց 13 հասցեի սեփականատեր Նելի Նիկոլայի Բաբաջանյանի ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Իսահակյան փողոց 13 հասցեի, 06-007-0056-0036 կադաստրային ծածկագրի հողամասի սահմանային չափերը ճշտելու, նշված հողամասում ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 25.07.1998թ. N 012672 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված՝ 16.08.2023թ. թիվ 2023VNKXDH ծածկագրով հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Իսահակյան փողոց 13 հասցեի 06-007-0056-0036 կադաստրային ծածկագրում գտնվող հողամասի սահմանները և մակերեսը համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:
2. Ստեփանավան քաղաքի 06-007-0056-0036 կադաստրային ծածկագրի 0.0408 հա հողամասի նկատմամբ ճանաչել Նելի Նիկոլայի Բաբաջանյանի սեփականության իրավունքը:
3. Օրինականացնել մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Իսահակյան փողոց 13 հասցեի, Նելի Նիկոլայի Բաբաջանյանի սեփականության իրավունքով պատկանող 06-007-0056-0036 կադաստրային ծածկագրում գտնվող 0.0408 հա ճշտված մակերեսով հողամասում 2013.թ. ինքնակամ կառուցված՝ 6.46 քմ ներքին մակերեսով սանհանգույցը և 0.87 քմ պարիսպը:
4. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 6.46 քմ ներքին մակերեսով սանհանգույցի համար 10808 /տաս հազար ութ հարյուր ութ/ ՀՀ դրամ և 0.87 քմ պարիսպի համար 1456/ հազար չորս հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ: Ընդամենը վճարվելիք գումարը կազմում է 12264/ տասերկու հազար երկու հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար նախատեսված գումարը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:
5. Վերը նշված անշարժ գույքին Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Իսահակյան փողոց 13 հասցեի փոխարեն տրամադրել նոր փոստային հասցե՝ Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Անտառային փողոց 4-րդ նրբանցք 33 բնակելի տուն:
6. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» օգոստոսի 2023 թվականի N **631**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 08-ի թիվ 03-Ա որոշումը, Ստեփանավան համայնք, քաղաք Ստեփանավան Գ. Նժդեհի փողոց, թիվ 15/1 հասցեի բնակիչ Լաուրա Լևոնի Մխոյանի դիմումը, Ստեփանավանի քաղաքապետի 22.09.2003թ.-ի թիվ 185 որոշումը, Ստեփանավանի քաղաքապետարանի կողմից 30.03.2004թ.-ին տրված բնակելի տարածության թիվ 1364 օրդերը, ՔԿԱԳ գործակալության ՔԿԱԳ տարածքային բաժնի պետի կողմից տրամադրված 27.11.2021թ.-ի թիվ ԲԱ444953 մահվան մասին պետական վկայականը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03012023-06-0011 վկայականի համաձայն սեփականության իրավունքով պատկանող, մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք. Գ. Նժդեհի փողոց 15 շենք, 1 բնակարանը նվիրել՝ Լաուրա Լևոնի Մխոյանին (ծնված՝ 25.08.1952թ., անձնագիր՝ AR0533512, տրված՝ 08.12.2017թ. 053-ի կողմից), Արթուր Վաղինակի Մխոյանին (ծնված՝ 24.08.1974թ., ն/ք՝ 006631261, տրված՝ 11.12.2015թ. 053-ի կողմից), Ադելինա Վաղինակի Մխոյանին (ծնված՝ 20.05.1983թ., անձնագիր՝ AR0658599, տրված՝ 12.04.2018թ. 003-ի կողմից) և Քրիստինա Սերգեյի Բալայանին (ծնված՝ 21.02.1983թ., ՌԴ անձնագիր՝ 45 16 872134, տրված՝ 26.10.2016թ. 770-098-ի կողմից):

2. Նվիրառուների հետ օրենքով սահմանված կարգով կնքել նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:
3. Նվիրատվության մասին պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուի կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» օգոստոսի 2023 թվականի N **632**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՊՐՈՄԵԹԵՎՍԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 19/7-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-007-0105-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.002 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի բնակիչ Արման Վոլոդյայի Սուքիասյանի կողմից՝ 06-007-0105-0011 կադաստրային ծածկագրով հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին 11.05.2023թ. ներկայացված թիվ Ս-480 դիմումը, 07.03.2018թ. թիվ 07032018-06-0011 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ստեփանավան համայնքի ավագանու 28.06.2023թ. թիվ 65-Ա որոշումը, ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570 որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ և 66-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող, Պրոմեթևսի փողոց 19/7-1 հասցեում գտնվող, 06-007-0105-0011 կադաստրային ծածկագրով, 0.002 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը տարանջատվել է 06-007-0105-0001 ծածկագրով հողամասից, որը համաձայն ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570-Ն որոշման հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս և չի դասվել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասը նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարել կառուցապատման իրավունքով օգտագործող Արման Վոլոդյայի Սուքիասյանին:

2. Համաձայն Ստեփանավան քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի և տարածքների գոտիավորման նախագծի, վերը նշված հողամասը հանել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկից, որը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում: Հողամասի ուղղակի վաճառքով օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Գործող օրենսդրության համաձայն հողամասը ուղղակի վաճառքով օտարել Արման Վոլոդյայի Սուքիասյանին և սահմանված կարգով նրա հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
4. Հողամասի օտարման գինը սահմանել Ստեփանավան համայնքի հողամասերի կադաստրային արժեքը՝ 1 քմ հողամասի համար 1221 /մեկ հազար երկու հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ և քաղաքացուց գանձել 24420 /քսանչորս հազար չորս հարյուր քսան/ ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի 900255101371 հաշվեհամարին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» օգոստոսի 2023 թվականի N **633**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՊՐՈՄԵԹԵՎՍԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 19/7-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-007-0105-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.002 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի բնակիչ Լուսինե Կարլենի Դոխոյանի կողմից՝ 06-007-0105-0011 կադաստրային ծածկագրով հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին 11.05.2023թ. ներկայացված թիվ Դ-481 դիմումը, 07.03.2018թ. թիվ 07032018-06-0023 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ստեփանավան համայնքի ավագանու 28.06.2023թ. թիվ 66-Ա որոշումը, ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570 որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 24 կետով և 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ և 66-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող, Պրոմեթևսի փողոց 19/7-2 հասցեով, 06-007-0105-0012 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.002 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը տարանջատվել է 06-007-0105-0001 ծածկագրով հողամասից, որը համաձայն ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570-Ն որոշման հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս և չի դասվել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասը նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարել կառուցապատման իրավունքով օգտագործող Լուսինե Կարլենի Դոխոյանին:

2. Համաձայն Ստեփանավան քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի և տարածքների գոտիավորման նախագծի, վերը նշված հողամասը հանել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկից, որը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում: Հողամասի ուղղակի վաճառքով օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Գործող օրենսդրության համաձայն հողամասը ուղղակի վաճառքով օտարել Լուսինե Կարլենի Դոխոյանին և սահմանված կարգով նրա հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
4. Հողամասի օտարման գինը սահմանել Ստեփանավան համայնքի հողամասերի կադաստրային արժեքը՝ 1 քմ հողամասի համար 1221 /մեկ հազար երկու հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ և քաղաքացուց գանձել 24420 /քսանչորս հազար չորս հարյուր քսան/ ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի 900255101371 հաշվեհամարին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

«22» օգոստոսի 2023 թվականի N **634**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0246-0001 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.01797 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ, Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 2, ՄԻԼԻՈՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9Ա ԵՎ ՄԻԼԻՈՆԻ ՓՈՂՈՑ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊՈՒՐԱԿԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔ ՀԱՍՑԵՆԵՐՈՎ՝ 0.002 ԵՎ 0.0056 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուզաննա Եղիշի Սահակյանի կողմից 17.08.2023թ. թիվ Ս-784 դիմումը, Ստեփանավան համայնքի ավագանու 17.07.2023թ. թիվ 72-Ա որոշումը, թիվ 14072023-06-0044 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին կետի 1)-ին մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570-Ն որոշմամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 –րդ կետով և 43-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Փոխանակել՝ Ռուզաննա Եղիշի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող, 25.05.2006թ. թիվ 2135283 և 08.11.2006թ. թիվ 2136460 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներով պետական գրանցում ստացած՝ համապատասխանաբար 0.002 և 0.0056 հա մակերեսներով, 11-րդ տարածագնահատման գոտում գտնվող հողամասերը համարժեք՝ 13-րդ տարածագնահատման գոտում գտնվող, Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող Մ. Խորենացու փողոց 3-րդ նրբանցք թիվ 2 հասցեով, 06-007-0246-0014 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, 0.01797 հա մակերեսով հողամասերը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» օգոստոսի 2023 թվականի N **635**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0050-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏԱՐԱՆՋԱՏՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 14.08.2023թ. թիվ 0928 գրությունը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1 -ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570 և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 -Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի 06-007-0050-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, տարանջատման արդյունքում առաջացած անշարժ գույքի և հողամասի սահմանները համաձայն ՀՀ ՊՆ «ՌԱԶՄԱՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

   ա) 25.20516 հա մակերեսով անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք. Գ. Նժդեհի փողոց թիվ 23/1 զորամաս:

   բ) 5.92440 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք. Հ. Մեսրոպյան փողոց թիվ 32:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» օգոստոսի 2023 թվականի N **636**

## ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արևլույս Սիմոնի Բաղդասարյանի կողմից ներկայացված 21.08.2023թ. թիվ Բ-790 դիմումը, 21.08.2023թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ նոտարական ակտի կոդ 863-20230821-84-7219149, 30.09.2005թ. N 1243521 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Լոռու մարզ, քաղաք Ստեփանավան Նոյեմբերյան փողոց թիվ 21 փոստային հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում առկա բնակելի տանը և օժանդակ շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, Ստեփանավան քաղաք, Նոյեմբերյան փողոց թիվ 14:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» օգոստոսի 2023 թվականի N **637**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՄԱՅԻՍԻ 2023Թ. ԹԻՎ 336 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, և առաջնորդվելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 26.05.2023թ. թիվ 336 որոշմամբ, ***որոշում եմ.***

1. 26.05.2023թ. թիվ 336 որոշման 2-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ:
   - Ճանաչել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 1.2422 հա հողամասի և հողամասի վրա գտնվող 729.53 քմ ներքին մակերեսով նկուղային հարկի, 28.02 քմ մակերեսով նկուղային հարկի աստիճանավանդակի, 60.45 քմ մակերեսով 1-ին հարկի աստիճանավանդակի, 79.36 քմ մակերեսով 2-րդ հարկի աստիճանավանդակի, 76.95 քմ մակերեսով 3-րդ հարկի աստիճանավանդակի և 64.05 քմ մակերեսով 4-րդ հարկի աստիճանավանդակի նկատմամբ Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» օգոստոսի 2023 թվականի N **638**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ 2 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ, 06-007-0001-0177 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Երիտասարդական փողոց 2 բնակելի տուն հասցեի սեփականատեր Աղասի Արեստի Բարխուդարյանի լիազոր ներկայացուցիչ Մկրտիչ Նորիկի Գրիգորյանի ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 2 բնակելի տուն հասցեի, 06-007-0001-0177 կադաստրային ծածկագրի հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, նշված հողամասում ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 18.06.2007թ. N 1676558 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված՝ 08.08.2023թ. թիվ 20232R6JS9 ծածկագրով հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ

կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 2 բնակելի տուն հասցեի 06-007-0001-0117 կադաստրային ծածկագրում գտնվող հողամասի սահմանները և մակերեսը համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:
2. Ստեփանավան քաղաքի 06-007-0001-0117 կադաստրային ծածկագրի 0.0760 հա հողամասի նկատմամբ ճանաչել Աղասի Արեստի Բարխուդարյանի սեփականության իրավունքը:
3. Օրինականացնել մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 2 բնակելի տուն հասցեի, Աղասի Արեստի Բարխուդարյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0001-0117 կադաստրային ծածկագրում գտնվող 0.0760 հա ճշտված մակերեսով հողամասում 2010թ. ինքնակամ կառուցված՝ 21,98 քմ մակերեսով բաց պատշգամբը, 2,69 քմ մակերեսով աստիճանավանդակը և 0,68 քմ պարիսպը:
4. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 21,98 քմ մակերեսով բաց պատշգամբի համար 36773/երեսունվեց հազար յոթ հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ, 2,69 քմ մակերեսով աստիճանավանդակի համար 4500 /չորս հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ և 0,68 քմ պարիսպի համար 1138 / հազար հարյուր երեսունութ/ ՀՀ դրամ: Ընդամենը վճարվելիք գումարը կազմում է 42411/ քառասուներկու հազար չորս հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար նախատեսված գումարը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:
5. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» օգոստոսի 2023 թվականի N **639**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24.05.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 327 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

Մայիս Վահրադյանից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին 24.05.2023թ. թիվ 327 որոշման /այսուհետ՝ Որոշում/ 1-ին պարբերության 3-րդ տողում գրված «34UP666 հաշվառման համարանիշով» բառերը փոխարինել «34UP887 հաշվառման համարանիշով» բառով և որոշման 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ կերպ՝ 2023 թվականաի ապրիլի 19-ի դրությամբ սեփականության իրավունքով Ստեփանավան համայնքի տարածքում քաղաքացի Մայիս Վահրադյանի անվամբ գրանցված MITSUBISHI CHARIOT GRANDIS 2.4 l մակնիշի, 34UP887 հաշվառման համարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գումարը կազմում է 296833 /երկու հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ, որից գույքահարկի ապառք՝ 225750 /երկու հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, գույքահարկի տույժ՝ 71083 /յոթանասունմեկ հազար ութսուներեք/ ՀՀ դրամ: Նշված գումարը առաջացել է 2016-2022թթ. ընթացքում իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարկային պարտավորությունները չկատարելու պատճառով և տվյալ գումարը ենթակա է գանձման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» օգոստոսի 2023 թվականի N **640**

## ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՐԱՖՖՈՒ ՓՈՂՈՑ 3 ՇԵՆՔ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Նորիկի Բադասյանի, Աննա Վաղարշակի Գևորգյանի, Գևորգ Վաղարշակի Գևորգյանի և Վարդան Նորիկի Բադասյանի կողմից ներկայացված 23.08.2023թ. թիվ Գ-797 դիմումը, 18.08.2023թ. N 18082023-06-0054 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին՝ 06007TRMZFDF և 06007YCXHJUP ծածկագրերով քաղվածքը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից 21.08.2023թ. կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝

***որոշում եմ***

1. ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, Րաֆֆու փողոց 3 շենք 3 բնակարան հասցեով բնակարանի տարանջատման արդյունքում առաջացած բնակարաններին տրամադրել նոր փոստային հասցեներ.
   - Ընդհանուր 77.9 քմ մակերեսով բնակարանին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Րաֆֆու փողոց, 3 շենք, 3 փոստային հասցեն:
   - Ընդհանուր 42.5 քմ մակերեսով բնակարանին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Րաֆֆու փողոց, 3 շենք, 3/1 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **ՀՐԱՀԱՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» օգոստոսի 2023 թվականի N **641**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 08-ի թիվ 03-Ա որոշումը, Ստեփանավան համայնք, քաղաք Ստեփանավան Պրոմեթևս փողոց, թիվ 19/7 հասցեի բնակիչ Վոլոդյա Արշալույսի Սուքիասյանի դիմումը, Ստեփանավանի քաղաքապետի 22.09.2003թ.-ի թիվ 327 որոշումը, Ստեփանավանի քաղաքապետարանի կողմից 30.03.2004թ.-ին տրված բնակելի տարածության թիվ 1375 օրդերը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03012023-06-0001 վկայականի համաձայն սեփականության իրավունքով պատկանող, մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք.Պրոմեթևսի փողոց 19 շենք, 7 բնակարանը նվիրել՝ Վոլոդյա Արշալույսի Սուքիասյանի (ծնված՝ 10.05.1952թ., անձնագիր՝ AT0408121, տրված՝ 06.03.2020թ. 053-ի կողմից), Կարինե Պարույրի Նազարյանին (ծնված՝ 22.09.1955թ., անձնագիր՝ AV0390085, տրված՝ 22.08.2022թ. 053-ի կողմից), Արթուր Վոլոդյայի Սուքիասյանին (ծնված՝ 09.09.1975թ., անձնագիր՝ AU0441394, տրված՝ 25.09.2021թ. 053-ի կողմից), Արման Վոլոդյայի Սուքիասյանին (ծնված՝ 29.05.1978թ., ն/ք՝ 011608007, տրված՝ 03.12.2020թ. 053-ի կողմից) և Տիգրանուհի Տիգրանի Ջիլավյանին (ծնված՝ 25.03.1983թ., ն/ք՝ 007008493, տրված՝ 30.09.2015թ. 053-ի կողմից)։

2. Նվիրառուների հետ օրենքով սահմանված կարգով կնքել նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:
3. Նվիրատվության մասին պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուի կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» օգոստոսի 2023 թվականի N **642**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0129-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.01 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1724-Ն որոշմամբ հաստատված Ստեփանավան քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծը, ***որոշում եմ՝***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0129-0001 ծածկագրի տակ գտնվող հողամասից առանձնացված 0.01 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը այլ հողեր գործառնական նշանակությունից, համաձայն քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու մասին 2013 թվականին հաստատված Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագծի, փոխադրել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի ֆոնդ:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ճանաչել 0.01 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
5. Վերը նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Արցախի փողոց թիվ 11 հողամաս:
6. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում նշված հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» օգոստոսի 2023 թվականի N **643**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0119-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.12 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1724-Ն որոշմամբ հաստատված Ստեփանավան քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծը, ***որոշում եմ՝***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0119-0001 ծածկագրի տակ գտնվող հողամասից առանձնացված 0.12 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը այլ հողեր գործառնական նշանակությունից, համաձայն քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու մասին 2013 թվականին հաստատված Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագծի, փոխադրել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի ֆոնդ:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ճանաչել 0.12 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
5. Վերը նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Ամերիկյան թաղամաս թիվ 22 հողամաս:
6. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում նշված հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

«29» օգոստոսի 2023 թվականի N **644**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0055-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.05024 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1724-Ն որոշմամբ հաստատված Ստեփանավան քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծը, ***որոշում եմ՝***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0055-0003 ծածկագրի տակ գտնվող հողամասից առանձնացված 0.05024 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը այլ հողեր գործառնական նշանակությունից, համաձայն քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու մասին 2013 թվականին հաստատված Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագծի, փոխադրել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի ֆոնդ:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ճանաչել 0.05024 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
5. Վերը նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Հ. Մեսրոպյան փողոց 47 հողամաս:
6. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում նշված հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

«29» օգոստոսի 2023 թվականի N **645**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0265-0029 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.06563 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1724-Ն որոշմամբ հաստատված Ստեփանավան քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը, «ԳԱԳԻԿ ՄԵՆՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծը, ***որոշում եմ՝***

1. Համաձայն ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570-Ն որոշման հավելված N 6-ի, ծանոթություն բաժնում՝ գրասենյակ գրանցված 06-007-0265-0007 ծածկագրով և ըստ Ստեփանավան համայնքի հերթապահ քարտեզի 06-007-0265-0029 ծածկագրի տակ գտնվող հողամասից առանձնացված 0.06563 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը՝ ըստ Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագծի հաստատել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ճանաչել 0.06563 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
5. Վերը նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Հ. Ավետիսյան 1-ին փողոց թիվ 40/1 հողամաս:
6. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում նշված հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ